ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՄԻՋԵՎ

Լևոն Աբրահամյան

Հոդվածում դիտարկվում է Արևելքի և Արևմուտքի սահմանին հայերի հայտնվելու հետաքրքիր մի օրինաչափություն՝ անկախ նրանից, թե ուր է տեղաշարժվել այդ սահմանը պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Առաջարկվում է այս դժվարբացատրելի առանձնահատկությունն օգտագործել համակեցության նոր ռազմավարություններ մշակելու համար:

Եվրոպան և Ասիան՝ Եվրասիա մայրցամաքի բաղկացուցիչները, ոչ միայն սահմանակից, պայմանականորեն սահմանազատված աշխարհագրական տարածքներ են, այլև մշակութային ու քաղաքական առումներով հակադիր հասկացություններ: Քանի որ Եվրոպայի և Ասիայի միջև հստակ բնական սահման չկա[1], ապա այն սահմանագծում են տարբեր ձևերով: Այդ սահմանը գլխավորապես տատանվում է Կասպից և Սև ծովերի միջև ընկած շրջանում: Սովորաբար այն անցկացնում են Կովկասյան Մեծ լեռնաշղթայով կամ մի փոքր հյուսիս՝ Կումո-Մանիչի գետաբերանով: Այս պարագայում Հայաստանը, ամբողջ Անդրկովկասով հանդերձ, հայտնվում է Ասիայում: Երբեմն էլ Անդրկովկասը ներառում են Եվրոպայի մեջ[2], և Հայաստանը հայտնվում է այնտեղ:

Սակայն այլ բաժանումների համաձայն՝ Հայաստանը շարունակ հայտնվում է Եվրոպայում: Օրինակ, նրա ֆուտբոլի թիմը հանդես է գալիս եվրոպական թիմերի լիգայում, իսկ ինքը՝ Հայաստանը, Եվրոպայի խորհրդի անդամ է[3], որտեղից նրան սպառնում են վտարել, եթե իրեն որպես եվրոպական երկիր չպահի: Դրսից նման «եվրոպական քաջալերանքը» ներսում հանդիպում է պատասխան ռեակցիայի. հայերն իրենց սովորաբար եվրոպացի են համարում: Թեև դա աշխարհագրական սահմանին մոտ բնակվող շատ, գուցեև նույնիսկ բոլոր ժողովուրդների քաղաքակրթական ինքնագնահատականն է: Այսպես, Թուրքիան հավակնում է նույնիսկ մտնել Եվ-

[1] Եվրոպայի՝ հոմերոսյան հիմնում հիշատակվող նախնական սահմանների մասին տե՛ս [1]:
[2] Տե՛ս, օրինակ, «Եվրոպա» հոդվածը Սովետական մեծ հանրագիտարանում [2, c. 383-384]:
[3] Հմմտ. [3, c. 68]. Վրաստանում իրերի համանման դրության մասին:

բամիություն: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այն դրսևորում է աչքի զարնող ավելի մեծ եվրոպակենտրոն հակում: Մանավանդ այն բանից հետո, երբ վերջերս այնտեղ հայտնաբերվեց եվրոպոիդի հնագույն գանգ, որը վրացիների կողմից հաճախ մեկնաբանվում է որպես «եվրոպացիների նախնի», վրացիներն սկսեցին իրենց եվրոպացի համարել նաև պալեոանթրոպոլոգիական առումով:

Այս նույն ժամանակ ժամանակակից Հայաստանը նիշաբանական (սեմիոտիկ) իմաստով ի ցույց է դնում իր մերձավորությունը Ասիային: Օրինակ, «արևմտյան» ազատ շուկան Երևանում (որ ներկայացված է մանր առևտրականների մակարդակով) առաջ եկավ որպես իսկական ասիական բազար, իսկ արևմտյան սպառողական ապրանքները սկզբում Հայաստան էին թափանցում (և մասամբ շարունակում են թափանցել) իրենց արևելյան կերպարանքով [4]: Հայաստանում երկյակ՝ եվրոպական և ասիական «քաղաքացիության» ֆենոմենի օրինակները կարելի է հեշտությամբ շարունակել[1], այնպես որ՝ շատ հատկանիշներով Հայաստանը ինչ-որ միջին օղակ է հանդիսանում Եվրոպայի և Ասիայի միջև՝ օժտված լինելով երկուսի հատկանիշներով:

Եվրոպայի և Ասիայի հակադրումը ենթադրում է ավելի հին և ընդհանուր՝ Արևմուտք-Արևելք հակադրություն: Այն անհամեմատ ավելի ընդհանուր բնույթի է և արտահայտում է, ընդհանուր առմամբ, մարդու, ընդ որում՝ բոլորովին էլ ոչ միայն աշխարհագրական, կողմնորոշումը իրեն շրջապատող աշխարհում: Ավելին, աշխարհի բաժանման բնույթն ու սահմաններն ըստ Արևելք-Արևմուտք սկզբունքի՝ պայմանավորված են հենց մարդով, նրա կողմից աշխարհի ակտիվ և ագրեսիվ յուրացմամբ: Ընդ որում, եթե Եվրոպայի և Ասիայի սահմանը կարող է փոքր-ինչ տեղաշարժվել այս կամ այն կողմ աշխարհագրագետների, քաղաքական գործիչների և սահմանամերձ տարածքների բնակիչների երևակայության մեջ, ապա Արևմուտքի և Արևելքի սահմանն անհամեմատ ճկուն է և շարժական: Բայց զարմանալին այն է, որ այդ սահմանի տեղաշարժերը կարծես թե առանց հայերի մասնակցության չեն անցնում:

Այսպես, սելջուկյան նվաճումների արդյունքում այս սահմանը տեղաշարժվեց դեպի արևմուտք, Եվրասիա մայրցամաքի այն ծայրը, ուր խաչակիրները փորձում էին դիմակայել արևելքից շարժվող նվաճողներին: Եվ հանկարծ Արևելքի և Արևմուտքի միջև այդ նոր սահմանին և գրեթե նույն այն ժամանակահատվածում, երբ սահմանն անցնում է այստեղով (XII – XIV դդ.), մինչև դեպի արևմուտք՝ Ասիայի և Եվրոպայի միջև ներկայիս սահմանին ավելի մոտենալը, հայտնվում է Կիլիկիայի հայկական թագավորու-

[1] Այդպիսի վառ օրինակի մասին էթնոերաժշտության ոլորտից տե՛ս [5]:

թյունը, ընդ որում՝ հայերի էթնիկական տարածքի սահմաններից դուրս։

Ռուսաստանի և Արևելքի երկրների միջև հարաբերություններում Արևմուտք-Արևելք ուղղությունը համապատասխանում էր Հյուսիս-Հարավ ուղղությանը այն դեպքերում, երբ ճանապարհը դեպի Արևելք անցնում էր Կովկասյան լեռնաշղթայով (Հյուսիս /Արևմուտք/ – Հարավ /Արևելք/ բնական սահման)։ Եվ հենց այս սահմանին մենք գտնում ենք չերքեզահայերին, ովքեր այստեղ հայտնվել են միջին դարերում և ընդհուպ մինչև XXդ. սկիզբը առևտրային միջնորդի դեր են խաղացել «հյուսիսային» Արևմուտքի և «հարավային» Արևելքի միջև[1]։

Մեկ այլ օրինակ է Ջուղա քաղաքի դրամատիկ պատմությունը։ Քաղաքը XVIդ. հանգուցային առևտրական կենտրոն էր այն ժամանակվա Արևելքի և Արևմուտքի միջև։ Երբ պարսից Շահ Աբաս արքան XVIIդ. սկզբին որոշեց Արևելքի և Արևմուտքի միջև սահմանը տեղակայել իր երկրում, նա պարզապես ավերեց Ջուղան և նրա բնակչությունը վերաբնակեցրեց Պարսկաստանում՝ հիմնելով Նոր Ջուղա քաղաքը, որը շուտով դարձավ նոր միջնորդ օղակ Արևելքի և Արևմուտքի միջև։ Մոտավորապես երկու հարյուրամյակ անց, երբ այդ սահմանը տեղաշարժվեց դեպի արևելք՝ Հնդկաստանի կողմը, այս անգամ, սկզբում հոլանդական, ապա՝ բրիտանական Օստ-Ինդյան ընկերության ակտիվ գործունեության արդյունքում, բրիտանացիներն այստեղ գտան հայ վաճառականների, ովքեր արդեն ստեղծել էին հաջողությամբ գործող առևտրային ցանց հենց այս նոր սահմանում։ Հայերը, որոնք վաճառականներ էին Նոր Ջուղայից, օգնեցին ընկերությանը առաջին քայլերն անել հնդկական շուկայում և բուֆերի դեր կատարեցին արևմտյան ու արևելյան վաճառականների միջև։ Այս կարևոր միջնորդ դերի համար 1688թ. հայերին նույնիսկ շնորհվեցին Հնդկաստանում բրիտանական քաղաքացիների արտոնություններ, որոնցից, այնուամենայնիվ, նրանց շուտով զրկեցին (այն բանից հետո, երբ 1760-ական թթ. սկզբին հայերի մի մասն օժանդակեց բենգալյան նավաբ Միր Քասիմին (Քասիմ Ալի խան)՝ նրա բարձրացրած հակաբրիտանական ապստամբությունում)[2] [8, c. 70]։

Նման օրինակների թիվը հեշտությամբ կարելի է բազմապատկել։ Դրանցից յուրաքանչյուրն, անշուշտ, ունի իր հատուկ պատմությունը, իսկ այդ պատմությունները տարափոխվում են բռնի վերաբնակեցումներից մինչև համարձակ առևտրային արշավանքները, ինչը հազիվ թե նպաստում է դրանց միավորմանը մեկ ընդհանուր մոդելի շրջանակներում։ Սակայն որքան էլ տարբեր լինեին այդ տեղափոխությունները, դրանց արդյունքը լինում

[1] Չերքեզահայերի պատմության և էթնոմշակութային կերպարի մասին տե՛ս [6]։ Հմմտ. Ուկրաինայի և Լեհաստանի հայերի համանման միջնորդ դերը. տե՛ս [7, c. 49, 61]։

[2] Միր Քասիմի ապստամբության և նրա լեգենդար գլխավոր հրամանատար, ծագումով հայ Գերգին խանի մասին տե՛ս [9, p. 383-418, 8, c. 50-71]։

էր նույնը. ուր էլ տեղաշարժվում էր Արևելքի և Արևմուտքի միջև շարժական սահմանը, Հայաստանը կամ հայերը ինչ-որ խորհրդավոր ձևով հայտնվում էին հենց այդտեղ՝ կարծես սպասելով սահմանի տեղաշարժմանը, որպեսզի միջնորդ դառնան նորովի սահմանազատված Արևելքի և Արևմուտքի միջև: Սովորաբար դա կատարվում է հակառակ նրանց կամքի. հայերը կարծես դատապարտված են միջնորդ դառնալ, բայց երբեմն այդ ընտրությունը ստանում է քաղաքական ռազմավարության ձև, ինչպես, օրինակ, Հայաստանը՝ Իրանի (Հարավի/Արևելքի) և Ռուսաստանի (Հյուսիսի/Արևմուտքի) միջև ներկայիս երկիմաստ միջնորդական դիրքորոշման պարագայում, ի դժգոհություն Արևմուտքի, հատկապես Միացյալ Նահանգների:

Առավել փոքր ծավալի շատ օրինակներ, որոնցում հայերը միջնորդի դեր են կատարում ըստ Արևելք-Արևմուտք հատկանիշի տեղական սահմանազատումներում, օրինակ՝ Կիպրոսում բրիտանացիների և թուրքերի միջև, ցույց են տալիս, որ մենք իսկապես գործ ունենք հայկական կենսակերպի ունիվերսալ մոդելի հետ: Վերջին օրինակը նույնպես վկայում է, որ այն ոչ միշտ է գոյատևման հաջող մոդել հանդիսանում: Կիպրոսում հայերը, որ ցեղասպանության ժամանակ փախել էին Թուրքիայից, սկզբում բնակություն հաստատեցին կղզու այն մասում, ուր ապրում էին տեղի թուրքերը (ահա թե ինչու հայերը միջնորդի դեր էին կատարում բրիտանացիների և թուրքերի միջև), բայց հունա-թուրքական հակամարտությունից հետո ստիպված էին վերաբնակվել կղզու հունական հատվածում [10, p. 50-51, 108, 119-122]: Բացի նշված մասնավոր մինի-մոդելից, ընդհանուր մոդելը նույնպես ցույց է տալիս, որ «երկուսի միջև լինելու» առանձնաշնորհին ունի իր գինը և որ մոդելն ունի երկու երես. «երկուսի միջև լինելու» վիճակը բազում փորձանքներ բերեց Հայաստանին և հայերին, քանի որ Արևմուտքն ու Արևելքը ոչ միայն համագործակցում են, այլև պատերազմում միմյանց հետ, իսկ նրանք, ովքեր գտնվում են նրանց մեջտեղում, դառնում են այդ պատերազմների անմիջական զոհերը: Արևելքի և Արևմուտքի միջև դիրք գրավելու այս մշտական «ձգտումը» այս կամ այն չափով վերաբերում է նաև հայ սփյուռքի կազմավորման գործընթացներին, ընդ որում՝ այդ գործընթացներում իրենց ավանդն են ներդնում «լինել երկուսի միջև» մեդալի երկու երեսները: Այսպես, 387թ. Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև հանգեցրեց հայ սփյուռքի՝ արևմտյան, «բյուզանդական» հայերից ընձյուղված առաջին կազմավորումների, արևմուտքին ավելի մոտ հայտնվելուն: Նման խմբերի հիման վրա հետագայում, Արևելք-Արևմուտք սահմանին, կազմավորվեց Կիլիկյան թագավորությունը, որն, ի վերջո, ընկավ այդ նույն Արևելքի ու Արևմուտքի դիմակայության արդյունքում: Այսօր, երբ քարավաններն այլևս չեն անցնում Հայաստանով, հայերը փնտրում

են նոր մոդելներ, որոնք կհարմարվեին միջնորդ լինելու, «մեջտեղում ապրելու» հին սովորույթին, որպեսզի գոյատևեն արևմտյան և արևելյան ճանապարհների երբեմնի աշխույժ խաչմերուկների վրայով թռչող ինքնաթիռների ժամանակակից աշխարհում, հատկապես երբ Արևելքի և Արևմուտքի միջև սահմանը կարծես թե պատրաստվում է նոր տեղաշարժի:

Միստիկ տրամաբանությունը, որ փորձեցինք նշել այս հոդվածում, մեզ տալիս է այն բանալին, լակմուսի թուղթը, որը կարող է օգնել կանխագուշակելու, թե այս անգամ ուր է տեղաշարժվելու Արևելքի և Արևմուտքի միջև քմահաճ սահմանը: Հարկ է ընդամենը փնտրել, թե աշխարհի քարտեզի որ մասում կան այսօր հայերի մեծ կուտակումներ: Ներկայումս նման վայր է Կալիֆորնիան: Ասիական ծագմամբ մարդկանց անընդհատ ավելացող քանակությունը, որը Կալիֆորնիան իբրև մշտական կամ ժամանակավոր բնակության վայր է ընտրում իր համար, մոտ ապագայում նման հնարավոր տեղաշարժի տեսողական «հավաստումն» է տալիս: Այն փաստը, որ սկսած 1980-ական թթ. ԱՄՆ-ը ավելի շատ առևտրական գործառնություններ է իրականացնում ոչ թե Ատլանտյան, այլ Խաղաղ օվկիանոսի միջոցով, նույնպես խոսում է մեր կանխատեսման օգտին[1] [11, p. 116]: Այնպես որ՝ Հայաստանի և հայ սփյուռքի ոչ հասարակ, բայց ընդհանուր առմամբ կոմպլեմենտար փոխհարաբերությունները ապագայում կարող են պահանջել փոխհարաբերության նոր ռազմավարություններ հայ ժողովրդի երկու՝ արևելյան և արևմտյան մասերի[2] միջև, պատրաստ լինելու համար Արևելքի և Արևմուտքի սահմանի նշմարվող հերթական տեղափոխմանը:

Հունվար, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Рабинович Е.Г.*, Europa propria? // Имя: внутренняя структура, семантическая аура, контекст / Тезисы международной научной конференции, часть 1, М.: Институт славяноведения РАН, 2001, с. 59–61.
2. Европа // Большая Советская энциклопедия, 2-е издание, т.15, Москва: БСЭ, с. 382–427.
3. *Кухианидзе А.В.*, Кавказоцентристская концепция демократии // Научная мысль Кавказа, N 4, 1995, с. 66–72.

[1] Ա.Կուխիանիձեն խաղաղօվկիանոսյան այս կողմնորոշումն օգտագործում է Արևելք-Արևմուտք սկզբունքով աշխարհի նոր բաժանման վերաբերյալ կանխատեսումների համար, բայց նոր սահմանի տեղում տեսնում է Կովկասը, որը, նրա կարծիքով, կարող է միջնորդ դառնալ ապագա Եվրոպական և Խաղաղօվկիանոսյան կենտրոնների միջև: Տե՛ս [3, c. 67-68]:

[2] Արևելյան/Արևմտյան Հայաստանից մինչև հայրենիք/սփյուռք հայ ժողովրդի հաստատուն երկճյուղման մասին տե՛ս [12]: Որոշ փոփոխություններով արտատպվել է «Диаспоры» (2005, № 3, с. 170-194) և «21-й ВЕК» (2005, № 2, с. 137-155) հանդեսներում:

4. *Աբրահամյան Լևոն, Գույան Արա, Մարության Հարություն, Շագոյան Գայանե, Պետրոսյան Համլետ,* Հայկական շուկայի ազգագրություն. Մի քանի հարցադրում, Արդի էթնամշակութային գործընթացները Հայաստանում, 1, Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Եր., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 1997, էջ 5-6:
5. *Abrahamian L.H.*, *Pikichian R.V.*, Observations on the Ethnography of a Modern City: The Example of Erevan. 1. The *Rabiz* and the Variability of the Urban Social Hierarchy // Soviet Anthropology & Archeology, Fall 1990, Vol. 23, N 2, p. 34–44.
6. *Аракелян Г.*, Черкесогаи // Кавказ и Византия, N. 4, с. 28–129.
7. *Григорян В.П.*, История армянских колоний Украины и Польши (армяне в Подолии), Ереван: Изд. АН Арм. ССР, 1980.
8. *Абрамян Р.А.*, Армянские источники VIII в. об Индии, Ереван: Изд. АН Арм. ССР, 1968.
9. *Seth M.J.*, Armenians in India, New Delhi, Bombay, Calcutta: Oxford & IBH Publishing Co., 1983.
10. *Pattie S.P.*, Faith in History: Armenians Rebuilding Community, Washington and London: Smithsonian Institution Press, 1997.
11. *Hague P., Harrop M., Breslin Sh.*, Comparative Government and Politics. An Introduction, London: Macmillan,1992.
12. *Абрамян Л.*, Армения и армянская диаспора: расхождение и встреча // Диаспоры, 2000, N 1–2, с. 52–76.

АРМЕНИЯ И АРМЯНЕ МЕЖДУ ВОСТОКОМ И ЗАПАДОМ

Левон Абрамян

Резюме

В статье проясняется странное совпадение, точнее закономерность: кажется, армяне всегда оказываются на стыке Востока и Запада, каким бы метаморфозам не подвергалась эта граница в течение истории. Этот феномен очевиден на примерах армянского Киликийского царства, кавказских черкезогаев или же армянства Индии и Новой Джуги в Персии.

«Тенденция» постоянного присутствия между Востоком и Западом относится и к процессам формирования диаспоры и должна использоваться в разработках новых стратегических планов сосуществования, особенно в свете вероятности новой метаморфозы границы Восток – Запад, которая, возможно, пройдет по регионам, где уже обосновались армяне, как бы «предвидя» эти изменения.